



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» փետրվարի 2018թ.

N 5-ՆԿ

ՍՈՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-152) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 21-ի եզրակացությունը և Ս. Նավասարդյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Սոնա Վարուժանի Նավասարդյանին 2018 թվականի փետրվարի 22-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-152) պաշտոնում՝ լուծելով ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-152) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2018 թվականի հունվարի 12-ին կնքված N 1 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:



Ի ԱՌԱՔԵԼՅԱՆ